ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
<<ԳԱՎԱՌԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՓԲԸ

ք. Գավառ Ազատության 21
Հեռ.026423353 էլ.հասցե gavaribk@mail.ru

ՕՔ-12
15.01.2024թ.

ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ
Պարոն Ա. Ավանեսյանին

Հարգելի պարոն Ա. Ավանեսյան

<<Գավառի ԲԿ>> ՓԲԸ-ն 18.12.2023թ հայտարարել է ԳՎԲԿ-ԳՀԾՁԲ-24/1 ծածկագրով մրցույթ: Ի թիվս այլ մասնակիցների հայտ էր ներկայացրել նաև <<Հովսեփյան >> ՍՊԸ-ն: Հայտերի գնահատման ընթացքում մասնակիցների կողմից իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրերի վերլուծությամբ պարզվեց, որ Հովսեփյան ՍՊԸ-ի հայտ ներկայացնելու օրվա դրությամբ միակ իրական շահառուն է հանդիսանում Արամ Հովսեփյանը, ով միաժամանակ <<Հայկարլի>> ՍՊԸ –ի իրական շահառուն է:

Հատկանշական է, որ <<Հայկարլի>> ՍՊԸ-ն 2022թ նոյեմբերի 12-ից 2 տարի ժամկետով ներառված է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Համաձայն <<Գնումների մասին>> օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ <<բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ,4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում...>>:

ՀՀ կառավարության 2017թ մայիսի 4-ի N526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգի (այսուհետ Կարգ) 119-րդ կետի 2-րդ ենթակետի ա) պարբերությամբ և 121-րդ կետով սահմանված է. <<Մասնակցի օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով **նախատեսված ցուցակում ներառվելը, դրանում գտնվելու ժամանակահատվածում, ինքնաբերաբար հանգեցնում է վերջինիս հետ փոխկապակցված անձանց գնումների գործընթացին մասնակցության իրավունքի սահմանափակման**: Գնումների հետ կապված հարաբերությունները կարգավորող ՀՀ օրենսդրության իմաստով՝ ֆիզիկական և իրավաբանական անձինք համարվում են փոխկապակցված, եթե նրանք գործել են համաձանեցված՝ ելնելով ընդհանուր տնտեսական շահերից կամ եթե տվյալ ֆիզիկական անձը կամ նրա ընտանիքի անդամը հանդիսանում է՝

ա. Տվյալ իրավաբանական անձի բաժնետոմսերի տաս տոկոսից ավելիին տնորինող մասնակից...>>

Ելնելով վերոգրյալից Գավառի ԲԿ ՓԲԸ-ի ներկայացնում ենք <<Հովսեփյան >> ՍՊԸ-ին գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ համապատասխան որոշումը և պահանջվող տեղեկատվությունը:

Сканировано с CamScanner

Մասնակցի						
Անվանումը	ՀՎՀՀ	Գործունեության հասցեն	Գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու իրավական հիմքը			Ցուցակում ներառելու մասին պատվիրատուի ղեկավարի կայացած որոշման ամսաթիվը և գնման ընթացակարգի ծածկագիրը
			Խախտվել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը	Խախտվել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը	Որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից	
<<Հովսեփյան>> ՍՊԸ	00224065	ք. Երևան Վ. Վաղարշյան 24/3	Գնումների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդված			12.01.2024թ., ԳՎԲԿ-ԳՀՇՁԲ-24/1

Հարգանքով

<<Գավառի ԲԿ>> ՓԲԸ տնօրեն՝ Գ. Սողոմոնյան

Сканировано с CamScanner